

Հարգելի տիկին Հովսեփյան.

Ի պատասխան Ձեր **16.03.2021**թ. գրության՝ տեղեկացվում է, որ ՀՀ վարչական դատարանը **03.11.2020** թվականի որոշմամբ /վարչական գործ թիվ ՎԴ/8615/05/20/ վարույթ է ընդունել Հայկ Սուվարյանի և Նարինե Սարկիսիան-Սարգսյանի հայցադիմումն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետի՝ Երևան քաղաքի Թամանյան փողոցի թիվ 2 շենքի թիվ 67 տարածք և թիվ 35 բնակարան հասցեներում բնակարանը ոչ բնակելի տարածքի վերակառուցման և տարածքների միավորման համար համակառուցապատողներ Հայկ Սուվարյանին և Նարինե Սարկիսիան-Սարգսյանին Երևան քաղաքապետարանի կողմից **26.11.2019** թվականին տրված թիվ **01/18-Ս9043-1529** շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու մասին թիվ **2899-Ա** որոշումը վերացնելու, Երևանի քաղաքապետարանին բարենպաստ վարչական ակտ ընդունել, այն է՝ համահայցվորներ Հայկ Սուվարյանին և Նարինե Սարկիսիան-Սարգսյանին ք. Երևան, Թամանյան փողոցի թիվ 2 շենքի թիվ 67 տարածք և թիվ 35 հասցեների ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ և շահագործման թույլտվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջների մասին:

ՀՀ վարչական դատարանը **03.11.2020** թվականի որոշմամբ նաև Երևանի քաղաքապետարանից պահանջել է նույն որոշումն ստանալու պահից՝ երկշաբաթյա ժամկետում դատարան ներկայացնել Երևանի քաղաքապետի՝ **16.09.2020** թվականի «Երևանի քաղաքապետի **2019** թվականի նոյեմբերի **26**-ի **հ.01/18-Ս9043-1529** շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու մասին» թիվ **2899-Ա** որոշման կայացման համար հինք հանդիսացած նյութերն ամբողջությամբ, ինչպես նաև համակառուցապատողներ Հայկ Սուվարյանի և Նարինե Սարկիսիան-Սարգսյանի կողմից ք. Երևան, Թամանյան փող., շենք **2, 67** տարածք և **35** բնակարան հասցեների շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար **13.07.2020** թվականին ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի նյութերն ամբողջությամբ: Նշված որոշումը Երևանի քաղաքապետարանում մուտքագրվել է **11.11.2020** թվականին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից **17.11.2020** թվականի **հ.07/114349** հ գրությամբ հարցում է ուղղվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին՝ խնդրելով տրամադրել ՀՀ վարչական դատարանի կողմից պահանջված ապացույցները, որպիսիք ամբողջական ստացվելուց հետո **27.11.2020** թվականի **հ.07/114349** հ գրությամբ, փոստային առաքման միջոցով **01.12.2020** թվականին ուղարկվել են ՀՀ վարչական դատարան:

Նշված վարչական գործով առաջին նախնական դատական նիստը նշանակված է եղել **2021** թվականի փետրվարի **22**-ին, որին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության համապատասխան աշխատակցի կողմից մասնակցություն չի ապահովվել՝ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով, նաև նպատակ ունենալով ստացված հանձնարարությունների կատարման համար աշխատաժամանակն առավել արդյունավետ օգտագործել, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախնական դատական նիստով ՀՀ վարչական դատարանը վարչական դատավարության օրենսգրքի **89**-րդ հոդվածի պահանջների շրջանակներում դեռևս պետք է կատարեր որոշակի դատավարական գործողություններ, որոնց

արդյունքում կայացվելիք որոշումները, որպես դատական պրակտիկայում ընդունված օրինաչափություն, հիմք են հանդիսանում հրավիրված դատական նիստը հետաձգելու համար՝ անկախ պատասխանողի ներկայացուցչի՝ դատական նիստին ներկայացած լինելու հանգամանքից:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության աշխատակցի կողմից Երևանի քաղաքապետարանի անունից **23.02.2021** թվականի **հ.07/8749** հ գրությամբ, **24.02.2021** թվականի փոստային առաքման եղանակով ՀՀ վարչական դատարանին է ուղարկվել թիվ **ՎԴ/8615/05/20** վարչական գործով քննվող հայցադիմումի վերաբերյալ գրավոր առարկություն, որով ներկայացվել են հայցն անընդունելի լինելու հիմքում ընկած փաստական և իրավական հիմքերը:

Թիվ **ՎԴ/8615/05/20** վարչական գործով **22.02.2020** թվականին հրավիրված դատական նիստը ՀՀ վարչական դատարանի որոշմամբ հետաձգվել է լրացուցիչ ապացույցներ ձեռք բերելու և երրորդ անձ ներգրավելու հարցը քննելու համար:

ՀՀ վարչական դատարանը, **02.03.2021** թվականին կայացված որոշմամբ, հաշվի առնելով հայցադիմումով ներկայացված պահանջները քննելու վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված առանձնահատկությունները՝ գտել է, որ Երևանի քաղաքապետարանին բարենպաստ վարչական ակտ ընդունել, այն է՝ համահայցվորներ Հայկ Սուվարյանին և Նարինե Սարկիսիան-Սարգսյանին ք. Երևան, Թամանյան փողոցի թիվ **2** շենքի թիվ **67** տարածք և թիվ **35** հասցեների ավատված շինարարության շահագործման փաստագրման ակտ և շահագործման թույլտվություն տրամադրել պարտավորեցնելու պահանջի մասով նույն վարչական գործի վարույթը պետք է առանձնացնել և քննել առանձին վարույթներով:

ՀՀ վարչական դատարանը **02.03.2021** թվականին կայացված որոշմամբ նաև Արմեն Բաբայանին ներգրավել է որպես երրորդ անձ:

Արդյունքում թիվ **ՎԴ/8615/05/20** վարչական գործով երկրորդ նախնական, իսկ թիվ **ՎԴ/1804/05/21** վարչական գործով առաջին նախնական դատական նիստերը նշանակված են **2021** թվականի ապրիլի **22**-ին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ դատական նիստին մասնակցելը հանդիսանում է դատավարության մասնակցի իրավունքը, այլ ոչ թե պարտականությունը և վարչական դատավարության օրենսգրքի **89**-րդ հոդվածի **2**-րդ մասով սահմանված է, որ նախնական դատական նիստի մասին պատշաճ ծանուցված դատավարության մասնակիցների չներկայանալու դեպքում նախնական դատական նիստը կարող է անցկացվել նրանց բացակայությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ